

**ԹՈՒՐԻԱՅԻ ՂԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ
ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ (1876-1878 ԹԹ.)**

Է. Գ. ՂԱՆԻԵԼՅԱՆ

«Հայկական հարցը»՝ Հայաստանն ազատագրելու և հայոց պետականությունը վերականգնելու համար հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի անվանումն է միջազգային դիվանագիտության մեջ: «Հայկական հարց» հասկացությունը դիվանագիտության պատմության մեջ շրջանառվել է ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմի ավարտից հետո: Բեռլինի վեհաժողովում (1878 թ.) Հայաստանի ազատագրման խնդիրը միջազգայնացվեց, որով այն դադարեց միայն հայ ժողովրդի ներքին խնդիրը լինելուց և «Հայկական հարց» պայմանական անվանումով մտցվեց միջազգային իրավունքի ոլորտներ:

Անհրաժեշտ է նշել, որ Հայկական հարցի էության շուրջ միջազգային դիվանագիտության ըմբռնումը քարացած և միանշանակ չի եղել: «Հայկական հարց» ասելով հասկացվել է.

ա) բարենորոգումները Արևմտյան Հայաստանում (19-րդ դ. վերջին քառորդ),

բ) Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը (1912-1914 թթ.),

գ) Արևմտյան Հայաստանում անկախ պետականության վերականգնումը (Խորհրդային Ռուսաստանի Ժողովրդի 1917 թ. դեկտեմբերի 29-ի դեկրետը «Թուրքահայաստանի մասին»),

դ) Միացյալ հայկական պետության ստեղծումը երկու Հայաստանի (Արևմտյան և Արևելյան) տարածքում (1919 թ. Փարիզի հաշտության կոնֆերանս, 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի հաշտության պայմանագիր):

Հայաստանի ազատագրման խնդիրը, «Հայկական հարց» անվանումով, միջազգային իրավունքի առարկա դարձավ ոչ առանց հիմքի: Չլինեին պատմական հայրենիքի տարածքում հայոց պետականության վերականգնմանը միտված Հայաստանի երկու հատվածները և գաղթօջախներն ընդգրկած ազատագրական շարժումները՝ միջազգային դիվանագիտությունը չէր անդրադառնա Հայոց հարցին, ճիշտ այնպես, ինչպես չանդրադարձավ քրդերի կամ ասորիների հարցին: Հետևաբար, մեղմ ասած, հակապատմական է և գիտականորեն ձախողված է թուրքական պետական կոնցեպցիայի այն թեզը, թե Հայկական հարցը հայերի հարցը չէ, արհեստական է, որը ծագել է Օսմանյան Թուրքիայի ներքին գործերին Ռուսաստանի և Անգլիայի միջամտության հետևանքով:

Փաստերը վկայում են, որ Հայկական հարցը միջազգայնացվել է թուրքական դիվանագիտության ջանքերով: Ռուսաստանը երբեք իր առջև խնդիր չէր դրել հաշտության բանակցություններում բարձրացնել Հայաստանի խնդիրը: Այսպես, Ադրիանապոլսի 1878 թ. հունվարի 31-ի զինադադարի ակտում (որի հիմքում ընկած էին ապագա հաշտության պայմանագրի հիմնական սկզբունքները) Հայաստանի և հայերի մասին ոչինչ չէր ասված¹: Պատրիարք Ն. Վարժապետյանի պատվիրակ Ռուսճուլյանի հարցումին Ռուսաստանի դեսպան Ն. Պ. Իգնատևը պատասխանել էր, որ Հայաստանն առայժմ չի ստանա այն ազատությունը, ինչ

¹ Տե՛ս **Б. Борьян**, Армения, международная дипломатия и СССР, часть I, М. -Л., 1928, էջ 231:

կտրվի Բուլղարիային, որովհետև «հայերը անպատրաստ գտնվեցին և Հայաստանի մեջ դարձել են մեռյալ տարրեր», և խորհուրդ է տալիս հայերին բալկանյան ժողովուրդների նման կռել ազատությունը. «Բայց մի վիատիք: Քանի որ Թուրքիոյ հպատակ եք, ապագային հույսով, այս վայրկեանես սկսեցեք պատրաստ լինիլ, պատրաստ՝ դաստիարակութեամբ, ուսմամբ և քաղաքագիտութեամբ, պատրաստ՝ նիթապես և բարոյապես, պատրաստ՝ ներքին կազմակերպութեամբ. պատրաստ եղիք այն օրուան համար, յորում քաղաքականութիւնը պիտի առաջնորդէ զձեզ ազատութիւն»²:

Ուշագրավ է, որ Բարձր դռան ճնշումը հայկական շրջանների վրա, իրենց խնդիրը նույնպես բարձրացնելու պարտադրանքով, սկսվել էր մինչև ռուս-թուրքական պատերազմը: Հայտնի է, որ 1876 թ. վերջերին Կ. Պոլսում հրավիրված եվրոպական տերությունների դեսպանախորհուրդը սուլթանից պահանջեց մշակել միջոցառումների ծրագիր՝ Օսմանյան կայսրության եվրոպական մասի ժողովուրդների վիճակը բարվոքելու մասին: Օսմանյան կառավարությունը, չցանկանալով կատարել այդ պահանջը, դիմեց կոմբինացված գործողությունների: Մի կողմից հռչակվեց թուրքական սահմանադրությունը, մյուս կողմից ճնշում գործադրվեց հայերի և հույների վրա՝ պահանջելու, որ բալկանյան ապստամբ ժողովուրդներին չտրվեն այնպիսի առանձնաշնորհումներ, որոնցից իրենք զուրկ են: Ահա թե ինչ է գրում Մեծ Բրիտանիայի դեսպան Էլիոտը 1876 թ. դեկտեմբերի 6-ին պատրիարք Ներսես Վարժապետյանի հետ ունեցած տեսակցության մասին. «Հայոց պատրիարքը եկավ երեկ ինձ մոտ: ... հույս հայտնեց, որ դեսպանախորհուրդը պիտի չպնդէ Բ. Դռան առաջ, թե ապստամբված նահանգներին տրվեն այնպիսի առանձնաշնորհումներ, որոնցից զուրկ պիտի մնան մյուս նահանգները, որոնք հանդարտ են կացել, բայց իրավունք ունեն, որ իրենց վիճակը ևս նկատողության առնվի»³:

Այդ նույն օրերին (1876 թ. նոյեմբերի վերջ - դեկտեմբերի սկզբներ) արևմտահայերի Ազգային ժողովը բուռն քննարկման նյութ էր դարձրել հայերի և Հայաստանի խնդիրը: Լուսաբանելով Ազգային ժողովի 1876 թ. դեկտեմբերի 10-ի նիստը՝ Սարուխանը արձանագրում է. «Երեսփոխանների մեծ մասը, որոնք, ինչպես վերև հիշեցինք, կասկածանքով էին վերաբերվում Քաղաքական ժողովի այս առաջարկության, կռահելով թե նա շարժվում է Բ. Դռան թելադրության համաձայն և չուզելով բացարձակ գործիք դառնալ սրա ձեռքը, միջին ճանապարհ է ընտրում և փոխանակ Քաղաքական ժողովի առաջարկության համաձայն Բ. Դռան խնդրագիր բողոք մատուցանելու, ինչպես արել էին հույները⁴, նույն Բ. Դռան թելադրությամբ, որոշում են խնդիրը հանձնել Ներսես պատրիարքին, որ գործի պարագաների պահանջին համապատասխան»⁵:

Թեպետ Ազգային ժողովը խնդրագրով չդիմեց Բ. Դռանը, ինչպես արել էին հույները, այլ լիազորել էր պատրիարք Ն. Վարժապետյանին՝ Հայկական հարցը բարձրացնել ըստ հանգամանքների պահանջի, այնուամենայնիվ նման որոշումը

² Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), Թիֆլիս, 1912, էջ 270:

³ Սարուխան, նշվ. աշխ., էջ 130: Տե՛ս նաև՝ “Blue Book”, Turkey, № 2 (1877), էջ 34:

⁴ Հույները սուլթանական կառավարությանը հղել էին բողոքագիր, որտեղ մասնավորապես ասված էր. «...միևնույն կառավարության ենթարկված ազգությունների մեջ պետք չէ տարբերություն դնել. բարենորոգումները պետք է բոլոր հպատակների վրա տարածվեն, առանց ցեղի խտրության, այլապես ապագայում կարող է խռովություն ծագել»:

⁵ Սարուխան, նշվ. աշխ., էջ 134-135:

նույնպես գոհացրել է սուլթանական կառավարությանը, մանավանդ որ մամուլը մի կողմից, մյուս կողմից պատրիարքը եվրոպական դեսպանների և պաշտոնյաների հետ իր հանդիպումներում (օրինակ՝ Էլիոտի հետ) Հայոց հարցը արդեն բարձրացրել էին: Պատահական չէ, որ Օսմանյան սահմանադրության ճարտարապետն ու գաղափարահայրը՝ Միդիատ փաշան, 1877 թ. հունվարի 9-ին անձամբ գնաց հայոց պատրիարքարան և հայ ժողովրդին ձոնված զգացմունքային ճառ արտասանեց:

Հայկական հարցը մտցնելով Կ. Պոլսի եվրոպական դեսպանների կոնֆերանսի օրակարգ՝ թուրքական դիվանագիտությունը փորձում էր ձախողել նրա բուն առաքելությունը, ապակողմնորոշել միջազգային հասարակական կարծիքը, ցույց տալով նրան, որ ապստամբություն բարձրացրած բալկանյան ժողովուրդների վիճակում են նաև կայսրության մյուս քրիստոնյաները, հետևաբար՝ ելքը ոչ թե քրիստոնյաների մի մասի համար արտոնյալ վիճակի ստեղծումն է, այլ համակայսրական բարեփոխումները, որի հնարավորությունը տալիս է նոր հռչակված օսմանյան սահմանադրությունը:

Սուլթանական կառավարության տղայական քաղաքականությունը վիժեցրեց Կ. Պոլսի դեսպանաժողովը և հանգեցրեց ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմին, որտեղ Թուրքիան կրեց ծանր և ջախջախիչ պարտություն: Պատերազմի արդյունքները իրենց վավերացումը գտան Սան-Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովի պայմանագրերում:

Հայաստանի հարցի քննարկումները և՛ Սան-Ստեֆանոյում, և՛ Բեռլինում, որոշակի քաղաքական միտվածությամբ, կատարվել են թուրքական դիվանագիտության ջանքերով: Սուլթանական կառավարությունն իր գործելաոճը կառուցել էր ելնելով կոնկրետ իրադրության պայմաններից: Մինչև 1878 թ. փետրվարի 15-ը պատմական պահն այնպիսին էր, որ ավելի ռեալ էր Արևմտյան Հայաստանի կորուստը. ռուսները գրավել էին նրա մեծ մասը, ռուսական բանակները կանգնած էին Կ. Պոլսի մատույցներում, իսկ Արդուլ Համիդն էլ թշնամու ձեռքը գերի չընկնելու համար մտադիր էր փախչել Բրուսա: Ծիշտ է, Անգլիան օգնություն էր խոստանում, բայց դա դեռևս գործի չէր վերածվել: Նման պայմաններում Ռուսաստանը կարող էր ռազմակալված Արևմտյան Հայաստանը միացնել իրեն, և ջախջախված Թուրքիան դրան ընդդիմանալու ոչ մի ուժ չուներ: Այսպիսի իրավիճակում թուրքական դիվանագիտությունը մտածում էր, որ ավելի լավ է Թուրքիայի գերիշխանության ներքո Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տրվի, նույնիսկ Լիբանանի օրինակով, քան այն միացվի Ռուսաստանին: Պատահական չէ, որ թուրքական արքունիքը համոզում էր Ն. Վարժապետյանին ռուսական դիվանագիտության առջև բարձրացնել Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը: Անդրե Մանդելշտամը գրում է, որ Բ. Դուռը վախենալով, որ Ռուսաստանը ցանկանում է Հայաստանը կցել իրեն, ինքը հայերին մղեց ինքնավարության պահանջին՝ թուրքական պետականության հովանու ներքո⁶:

Սա հաստատում է նաև Սարուխանը. «Այն միջոցին քաղաքական հանգամանքներն էլ այնպես էին դասավորվել, որ մասամբ նույնիսկ թուրք կառավարությունն էր մղում տվողն այս խնդրի հարուցման: Ինչպես ուրիշ առթիվ էլ ասել ենք, թուրք կառավարությունը համարյա ճնշում էր գործ դրել Ներսեսի վրա...: Ներսես՝ Սավֆեթ փաշայի ներշնչած այս քաղաքականությունն ազգային շահերին համաձայն գտնելով՝ ըստ այնմ վարվեց...»⁷:

⁶ Տե՛ս Ջ. Կիրակոսյան, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Եր., 1978, էջ 216:

⁷ Սարուխան, նշվ. աշխ., էջ 266:

Հայկական հարցի շուրջ ռուսների հետ բանակցություններ վարելու պարտականությունները Ներսես Վարժապետյանը դրեց Ազգային ժողովի առաջին և երկրորդ քարտուղարներ Ստեփան Ասլանյանի և Հովհաննես Նուրյանի վրա: Նրանք Ադրիանապոլիս գնացին որպես թուրքական պաշտոնական անձինք: Ասլանյանը զինվորական բժիշկ էր և պետք է աշխատեր թուրքական զինվորական հիվանդանոցում, իսկ Նուրյանը, որպես Կարմիր մահիկի ներկայացուցիչ, զբաղվելու էր հիվանդ զինվորների փոխադրությամբ: Նրանց ծառայության բնույթը ռուսական բանակ ազատ էլ ու մուտի հնարավորություն էր տալիս, և «գաղտնի» կերպով բանակցություններ պետք է վարեին Իգնատևի հետ: Այս պաշտոնական անձինք, միաժամանակ Ներսես պատրիարքի «գաղտնի պատվիրակները», հետագայում դուրս եկան ոչ թե հայ ժողովրդի իրական շահերի պաշտպաններ, այլ թուրքական պատվիրակության կամքը կատարողներ: Նրանք ռուսական պատվիրակության հետ բանակցությունները վարում էին, ըստ երևույթին, նախապես թուրքական պատվիրակության հետ համաձայնեցված պլանով*:

Այս կարծիքն է պաշտպանում նաև Եղիշե քահանա Գեղամյանցը. «Ինձ թվում է, սիրելի ընթերցող, որ այդ բոլոր գաղտնի անձնավորությունների գաղտնեզործությունները՝ բացառապես հայ ամբոխի և ռուս դիպլոմատիայի համար էին, բայց ոչ երբեք Բ. Դոան համար, որ շատ լավ իրազեկ էր եղած անցուդարձի մասին, բայց այնպես էր ձևացնում, իբր թե ոչինչ չի տեսնում և ոչինչ չի լսում»⁹:

Իգնատևի հետ «գաղտնի» բանակցությունների արդյունքում վերջինս ռուսաց կայսեր թույլտվությամբ կազմեց հատուկ հողված Հայաստանի մասին, որով Թուրքիան պարտավորվում էր ստեղծել վարչական ինքնավարություն հայկական նահանգներում՝ Կարինում, Մուշում, Վանում, Տիգրանակերտում (Դիարբեքիր), Սեբաստիայում և այլուր: Ըստ որում, կատարվող բարեփոխումները ապահովվելու էին իրական երաշխիքներով: Ահա 16-րդ հողվածի նախնական բովանդակությունը. «Թուրքիոյ եվրոպական գավառաց մեջ տեղի ունեցած անկարգութեանց և հարստահարութեանց համանմանն ասիական գավառաց մեջ տեղի ունենալով, ասոր առաջքն առնելու համար սուլթանն երաշխավոր կմնա Ռուսիոյ կայսեր քով, որոշմամբ թե՛ Կովկասեան նահանգի սահմանակից հայաբնակ գավառներուն (Կարին, Մուշ, Վան, Տիգրանակերտ, Սեբաստիա և այլն) վարչական ինքնօրինութիւն մը տա, վիլայեթի օրինաց մեջ հարկ եղած փոփոխութիւններն ընելով և այն ապահովել իրական երաշխավորութեամբ սուլթանին»¹⁰:

Իսկ թուրքական պատվիրակությունն ընդդիմացավ 16-րդ հողվածի նախնական խմբագրությամբ Արևմտյան Հայաստանում ինքնավարություն մտցնելու պահանջին այն պատճառով, որ այն ժամանակ, երբ քննարկվում էր Սան-Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրը, արդեն փոխվել էր իրադրությունը: 1878 թ. փետրվարի 15-ին բրիտանական նավատորմը խարխախ էր գցել Կ. Պոլսի մոտ՝ Իշխանաց կղզիների առջև: Դա նշանակում էր, որ Անգլիայի խոստացած օգնությունն այլևս գործի էր վերածվել, իրական էր դարձել բրիտանական կաթինետի այն հավաստիացումը, թե Ռուսաստանը կդատարկի Արևմտյան Հայաստանում գրաված երկրամասերը: Փոխվել էր իրադրությունը. փոխվեց նաև Հայաստանի նկատմամբ Օսմանյան Թուրքիայի քաղաքականությունը: «Հայկական ինքնավարության» միջոցով Արևմտյան Հայաստանը ռուսական նվաճումից փրկելու թուրքական մարտավարությունը այլևս սպառել

* Տե՛ս Բ. Борьян, նշվ. աշխ., էջ 231:

⁹ Եղիշե քահանա Գեղամյանց, Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում, Բագու, 1915, էջ 361:

¹⁰ Տե՛ս Սարուխան, նշվ. աշխ., էջ 285:

եր իրեն: Դա էր պատճառը, որ սուլթանական արքունիքը հրահանգ իջեցրեց Սան-Ստեֆանոյում բանակցող իր պատվիրակներին՝ Հայկական հարցում «ինքնավարության փոխարեն սահմանափակվել «բարեփոխումներով»: 1878 թ. փետրվարի 19-ին Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև կնքված Սան-Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածում Հայաստանի հարցն իր արտացոլումը գտավ հետևյալ ձևակերպումով. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, **Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ**, և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»¹¹ (ընդգծումն իմն է - Լ. Դ.):

Ուշագրավ է նաև այն փաստը, որ սուլթանական կառավարությունը Բեռլինի վեհաժողովի նախօրյակին վերստին ջրի երես էր հանել հայկական ինքնավարության գաղափարը: Նա Անգլիայի դեսպան Լեյբրդի միջոցով հայերին դրդում էր, որ ինքնավարության պահանջով դիմեն եվրոպական պետությունների Բեռլինի վեհաժողովին¹²: 1878 թ. հունիսին հանդես գալով Ազգային ժողովի նիստում՝ պատրիարք Ներսես Վարժապետյանը, խոսելով ինքնավարության մասին, իր ելույթում նշում էր. «...ամենն առաջ Բ. Դուռը վկայած է ու կվկայե մեր այս իրավունքին»¹³: Իսկ Աբդուլ Համիդը նախօրոք ծանոթացել և հավանություն էր տվել ինքնավարության ծրագրին¹⁴: Օսմանյան արքունիքը ոչ միայն արտոնել էր արևմտահայերին կազմել պատվիրակություն, դիմել Բեռլինի վեհաժողովին և նրա մասնակից պետություններին, այլև թույլատրեց, որ պատրիարքարանը օգտվի ծածկագիր հեռագրից՝ Խրիմյանի պատվիրակության հետ կապ պահպանելու նպատակով: Պատրիարքարանի ծածկագիրը կազմել էր Բ. Դռան ծածկագրության դիվանի պետ Խաչիկ Օտյանը (Գրիգոր Օտյանի եղբայրը)¹⁵:

Դժվար չէ կռահել, թե ինչ նպատակով էր Օսմանյան կառավարությունը վերստին շրջանառության մեջ դրել Հայաստանի ինքնավարության հարցը: Անտեղյակ լինելով Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև 1878 թ. մայիսի 18(30)-ին Լոնդոնում կնքված գաղտնի համաձայնագրին՝ թուրքերը դեռևս հույս ունեին Բեռլինի վեհաժողովում փյույել Օսմանյան կայսրության ամբողջականությունը: Հայերի՝ նման պահանջով սուլթանական կառավարությունը ցանկանում էր Եվրոպային ցույց տալ, որ բավկանյան ժողովուրդների վիճակին են նաև կայսրության մյուս քրիստոնյաները, ուրեմն ստեղծված վիճակից դուրս գալը ոչ թե նրանց մի մասի համար արտոնյալ վիճակի ստեղծումն է՝ անկախության կամ ինքնավարության միջոցով, այլ համընդհանուր բարենորոգումներն ամբողջ կայսրության տարածքում: Երբ բացահայտվեց ռուս-անգլիական գաղտնի համաձայնագրի բովանդակությունը, սուլթանը պահանջեց Ներսես պատրիարքից հայոց պատվիրակությանը

¹¹ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», Եր., 1972, էջ 92: Տե՛ս նաև **Ю. В. Ключников и Андрей Сабинин**, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. I, М., 1925, էջ 222:

¹² Տե՛ս **Մարութան**, նշվ. աշխ., էջ 362-363:

¹³ «Ատենագրությունը ազգային ժողովոյ», Կ. Պոլիս, 1878, էջ 8-9:

¹⁴ Տե՛ս **Հ. Երամյան**, Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, Ալեքսանդրիա, 1929, էջ 324:

¹⁵ Տե՛ս **Մարութան**, նշվ. աշխ., էջ 449-450:

ետ կանչել Բեռլինից: Ներսեսը պատասխանում է, թե իր համար գերադասելին պատրիարքարանի դռնից կախվելն է, քան պատվիրակությանը ետ կանչելը:

Ռուս-անգլիական գաղտնի համաձայնագրով Անգլիան և Ռուսաստանը պայմանավորվել էին Սան-Ստեֆանոյի նախնական պայմանագրի փոփոխությունների շրջանակների շուրջ: Ընդ որում, 11-րդ հոդվածով Անգլիան Ռուսաստանի առաջ «պարտավորվում էր չառարկել Սան-Ստեֆանոյի նախնական պայմանագրի այն հոդվածների դեմ, որոնք չեն փոփոխվել» համաձայնագրով¹⁶:

Ռուս-անգլիական գաղտնի համաձայնագիրը լուծում էր տվել նաև Հայաստանին առնչվող խնդիրներին այն ձևաչափով, որ կատարվելու էր Բեռլինի վեհաժողովում: Այսպես, գաղտնի համաձայնագրի 7-րդ հոդվածը սահմանում էր, որ «Սան-Ստեֆանոյի նախնական պայմանագրի մեջ Հայաստանի վերաբերյալ պարունակվող խոստումները պետք է տրվեն ոչ թե բացառապես Ռուսաստանի, այլ նաև Անգլիայի անունից»¹⁷, այսինքն՝ Հայաստանում բարենորոգումների վերահսկման մենաշնորհի իրավունքը վերցվում էր Ռուսաստանից (այս պահանջն իր արտահայտությունը գտավ 1878 թ. հուլիսի 1/13-ի Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածում): Իսկ 10-րդ հոդվածով Ալաշկերտի հովիտը և Բայազետ քաղաքը վերադարձվելու էր Թուրքիային¹⁸, որն իր վավերացումը գտավ Բեռլինի պայմանագրի 60-րդ հոդվածում. «Սան-Ստեֆանոյի պայմանագրի 19-րդ հոդվածով Ռուսաստանին զիջված Ալաշկերտի հովիտը և Բայազետ քաղաքը վերադարձվում են Թուրքիային»:

Պատմության քուրք կեղծարարներին հիշեցնենք, թե ինչու ցարական դիվանագետների հաշիվների մեջ չէր մտնում Թուրքիայի հետ բանակցություններում Հայաստանի խնդիրը բարձրացնելը: Ցարական Ռուսաստանի արևելյան քաղաքականության գլխավոր նպատակներից մեկը Միջերկրական ծով դուրս գալն էր Հայաստանի վրայով՝ այն իրեն միացնելու կամ կցելու ճանապարհով: Այդ պատճառով Օսմանյան կայսրությունում կատարվելիք ամեն մի առաջադիմական շարժում, բարեփոխություն անհարիր էր Ռուսաստանի շահերին: Քանի որ բարեփոխումների շնորհիվ այլազգի քրիստոնյաների, այդ թվում՝ արևմտահայերի վիճակը բարելավվելու դեպքում Ռուսաստանը կորցնում էր բարոյական մի մեծ կրոնական: Ադմկելով Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների անելանելի վիճակի մասին՝ Ռուսաստանը դա առիթ էր դարձնում ցանկացած պահի, ցանկացած ձևով միջամտելու Թուրքիայի ներքին գործերին: Եվ պատահական չէր Ռուսաստանի դիրքորոշումը Օսմանյան Թուրքիան բարեփոխելուն միտված Միդհատյան շարժման նկատմամբ: Կ. Մարքսը, որը միաժամանակ «Արևելյան հարցի» լավագույն մասնագետ էր, գրում է. «...ռուս կառավարությունն ավելի շատ ստրատեգիա ու տակտիկա բանեցրեց Միդհատ փաշային Կ. Պոլսից հեռացնելու վրա, ... քան Պլևնան առնելու վրա»¹⁹:

Ցարական դիվանագիտության հաշիվների մեջ ավելի քան չէր մտնում Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը: Դա նշանակում էր բուֆերային գոտի ստեղծել Թուրքիայի և Ռուսաստանի միջև, պատմեջ դնել հեռանկարում Թուրքիայի հաշվին սահմանների ընդլայնման, Հայաստանի վրայով Միջերկրական ծով դուրս գալու քաղաքականության առաջ, որովհետև Հայաստանի ինքնավարությունը երաշխավորվելու էր եվրոպական տերությունների հովանավորությամբ:

¹⁶ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», էջ 102:

¹⁷ Նույն տեղում, էջ 100:

¹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 101:

¹⁹ Աշոտ Հովհաննիսյան, Էնգելսը և Հայկական հարցը, Եր., 1931, էջ 26-27:

Կ. Պոլսից Պետերբուրգի «Նովոյե վրեմյա» թերթի թղթակից Ա. Մուչանովը 1878 թ. իր թերթին գրում էր. «չպետք է տեսադաշտից հանել այն, որ Անգլիան ուղղակի շահ ունի ռուսական կովկասյան սահմանի վրա ստեղծելու չեզոք իշխանապետություն, որը սահման դնելու ռուսական առաջխաղացմանը»²⁰:

Բացի այդ, ինքնավար հայկական պետության առկայությունը վարչական դժվարություններ կառաջացնելու Կովկասում՝ կապված ռուսական տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանի հետ: Ամեն մի ինքնավարություն միշտ էլ միտում ունի վերածվելու անկախ պետության, ինչին որ կձգտեին միանալ նաև արևելահայերը (ճիշտ այնպես, ինչպես այսօր Թուրքիան է հանդես գալիս Իրաքում ստեղծվելիք քրդական ինքնավարության դեմ, որին կձգտեն միավորվել նաև Թուրքիայի քրդերը): Նման մտահոգություն արդեն տեսնում ենք Գորչակովին ուղղված Կ. Պոլսի ռուսական դեսպան Իգնատևի 1878 թ. զեկուցագրում. դա «կարող է հենց մեզ համար որոշ վարչական դժվարություններ ստեղծել Կովկասում եւ նույնիսկ հայերի մեջ պահպանել ցանկություններ ու ձգտումներ, որ համապատասխան չեն մեր շահերին»²¹:

Պատահական չէր նաև, որ Բեռլինի վեհաժողովի նախօրեին ռուսական արքունիքի գիտությանը Բեռլինում էր հայտնվել Լորիս-Մելիքովը: Ռուսական դիվանագիտության ձայնավորող Խրիմյանի պատվիրակությանը խորհուրդ էր տալիս, որ հայերը ինքնավարություն պահանջեն ոչ թե Ռուսաստանին սահմանակից Արևմտյան Հայաստանում, այլ Կիլիկիայում²²:

Այսպիսով, Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու քաղաքականությամբ թուրքական դիվանագիտությունը միաջազգայնացրեց Հայաստանի խնդիրը («Հայկական հարցը»): Դրանով մեկից ավելի նպատակ էր հետապնդվում. ա) չկորցնել Ռուսաստանի կողմից ռազմակալված Արևմտյան Հայաստանը, բ) հանրվածել բալկանյան ժողովուրդների նվաճումներին, որոնք ձեռք էին բերել կա՛մ անկախություն, կա՛մ ինքնավարություն:

Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու գաղափարաբանությամբ էլ սուլթանական վարչակարգը մշակեց Հայաստանի հարցի լուծման թուրքական եղանակը, որի ծրագրային ձևակերպումը դեռևս 1878 թ. տվեց կառավարության առաջին մինիստր (մեծ վեզիր) Քեամիլ փաշան. «...եթե Եվրոպիոյ մեջ մեր ծոցը օձ սնուցինք, պետք չէ, որ նույն հիմարությունները ընենք մեր ասիական Տաճկաստանի (Արևմտյան Հայաստանի - Է. Դ.) մեջ. խելոքությունը ջնջել վերացնելն է այն ամեն տարրերը, որ օր մը կրնան մեզ նույն վտանգը ծնանիլ... Ուրեմն այդ հայ ազգը վերացնելու, անհետ և անճետ ընելու ենք: Եվ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիր մեզ: Ամեն գործիք պատրաստ ունինք՝ քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամեն ինչ. կրոնական պատերազմ մը կիրատարակենք, և դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ՝ որ ո՛չ զենք ունի, ո՛չ զինվորություն, ո՛չ պաշտպան: Եվ հակառակը՝ մենք և՛ զենք ունինք, և՛ զինվորություն, և՛ Եվրոպայի ամենամեծ պետությունն էլ (Անգլիան - Է. Դ.) մեզ նիզակակից է և փոքրասիական մեր տերությունների հովանավորը...: Եվ եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնեական Եվրոպան կրոնակից մը փնտռե և չգտնե տաճկական Ասիո մեջ, կթողնե զմեզ հանգիստ»²³:

²⁰ Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 197:

²¹ Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հ. երկրորդ, Էջմիածին, 1922, էջ 186:

²² Տե՛ս Հ. Երամյան, Հուշարձան Վան-Վասպուրականի, էջ 103:

²³ «Փորձ», 1879, № 7-8, էջ 204-205:

Հայերի ֆիզիկական բնազնզման մասին այնքան անթաքույց էին բարձրաձայնում սուլթանը և նրա շրջապատը, որ դրա մասին ահազանգում էին Օսմանյան կայսրությունում գործող օտարերկրյա դիվանագետները: Ահա թե ինչ է գրում 1882 թ. Վանի ռուսական փոխհյուպատոսի պաշտոնակատարը Ռուսաստանի դեսպան Նովիկովին. «...Ըստ որում առավել բարձրաստիճան կառավարական պաշտոնյաները բացեիքաց արտահայտվում են, թե իբր այստեղ երկրորդ Բուլղարիա է պատրաստվում և որ իրենք փորձից դաս առած, կկարողանան խեղդել իրենց կառավարությանը վնասակար տարրին և, այդպիսով, մեկընդմիջտ վերջ կտան «Հայկական հարցին»²⁴:

Այսպիսով, Հայկական հարցի լուծման բուրքական եղանակը հայերի ցեղասպանությունն էր, որ Բեռլինի վեհաժողովից հետո հռչակվում էր պետական քաղաքականություն:

Э. Г. ДАНИЕЛЯН — Роль Турции в обсуждении армянского вопроса как международного (1876-1878 гг.). — Факты свидетельствуют, что Армянскому вопросу придан был международный характер стараниями турецкого правительства. Процесс этот начался до заключения Сан-Стефанского договора — в рамках совещания послов европейских государств (в конце 1876 г.), созванного в Константинополе в связи с восстанием балканских народов. В статье показано также, что обсуждение вопроса о реформах и автономии Западной Армении и в Сан-Стефано, и в Берлине проводилось с определенными политическими целями, стараниями турецкого правительства. Турецкая дипломатия преследовала цели: а) не потерять занятую русскими войсками Западную Армению; б) поставить под удар завоевания балканских народов, добившихся независимости или автономии.

²⁴ «Геноцид армян в Османской империи: Сборник документов и материалов». Ер., 1982, с. 14.